Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	<<Մասնակցային դպրոց>> կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Սովորողների մոտ մշակութային և գեղագիտական պատկերացումների ձևավորումը գերմաներեն առարկայի դասավանդման ընթացքում միջին դպրոցում
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Թեմուրյան Համեստ Հուսիկի Գերմաներենի ուսուցչուհի 098 491 401 Գերմաներեն 3-12-րդ դասարաններում
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	"ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց" ՊՈԱԿ 098705011 hnaberd@schools.am hnaberdschoolsite.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

- Գերմաներեն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մոտ մշակութային և գեղագիտական պատկերացումների ձևավորումը.....5
- Գերմաներեն առարկայի դասի կազմակերպման ընթացքը միջին դպրոցում.....13

Եզրակացություն.....27 Օգտագործված գրականության ցանկ.....29

Հետազոտական հարց–Ինչպես զարգացնել սովորողների մոտ մշակութային և գեղագիտական պատկերացումները գերմաներեն առարկայի դասավանդման ընթացքում միջին դպրոցում Հնաբերդի միջնակարգ դպրոցի օրինակով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Կրթությունը և դաստիարակությունը, որոնք նպաստում են անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, ցանկացած քաղաքակիրթ հասարակության ձևավորման հիմքն են: Աճող սերնդի դաստիարակությունն իրականացվում է քաղաքական ու տնտեսական բարեփոխումների պայմաններում, որտեղ իր առանցքային դերն ունի սոցիալ– մշակութային միջավայրը:

Գեղագիտական դաստիարակությունը կյանքում և արվեստում գեղեցիկի ընկալման, գեղագիտական զգացումների, ճաշակի, պատկերացումների, պահանջմունքների, գեղեցիկի գնահատման կարողությունների ձևավորման գործընթաց է:

Գեղագիտական դաստիարակությունն ուղղված է այն կարևոր խնդրի լուծմանը, որ երեխան կարողանա տեսնել, զգալ, գնահատել գեղեցիկը, կատարյալը, ներդաշնակը, իր ներգործությամբ գեղեցկացնել շրջապատը: Իրեն շրջապատող աշխարհը և մարդկային հարաբերությունները խորությամբ բացահայտելուն ու ճանաչելուն մեծապես նպաստում է համակարգված և նպատակաուղղված գեղագիտական դաստիարակությունը դեռևս վաղ տարիքում ընտանիքում, այնուհետև կրտսեր դպրոցական տարիքում ուսումնական բոլոր առարկաների հնարավորությունների լիարժեք օգտագործման ընթացքում, ինչպես նաև արտաուսումնական և արտադպրոցական պարապմունքների ընթացքում:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մոտ մշակութային և գեղագիտական պատկերացումների ձևավորումը գերմաներեն առարկայի դասավանդման ընթացքում միջին դպրոցում:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել գերմաներեն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մոտ մշակութային և գեղագիտական պատկերացումների ձևավորումը,

- ներկայացնել գերմաներեն առարկայի դասի կազմակերպման ընթացքը միջին դպրոցում:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք ինտերնետային հոդվածները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 29 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ[1]:

Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

Անմիջական կապը շրջապատող իրականության, երեխայի կյանքի ու կենսափորձի, հետաքրքրությունների ու երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը և բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի անձի ինքնահաստատման և ինքնարտահայտման համար:

Միաժամանակ, ուսուցչի կողմից հմտորեն կիրառելու դեպքում դրանք կարող են խթանել և բարենպաստ վերաբերմունք ձևավորել թեմայի ուսումնասիրության նկատմամբ:

Արդյունավետ ուսուցման կարևոր պայման է նաև աշակերտների կողմից իրենց կատարած ուսումնական աշխատանքների վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը:

Երբ աշակերտները ցանկանում են նոր բան սովորել, կարևոր է պարզել, թե ինչպիսի՞ն է եղել նրանց առաջընթացը: Իսկ դա պահանջում է գնահատում:

---

[1] Գաբրիելյան Յու., Գերմաներեն լեզվի տիպաբանություն: Երևան: Երևանի Համալսարանի հրատարակչություն,2006թ.,էջ 85:

Գնահատումը դրդում է աշակերտներին մտածել նյութի շուրջ, վերանայել ու ամրապնդել գիտելիքներն ու դրսևորած կարողությունները:

Ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում:

Արդյունավետ ուսուցում իրականացնելու համար հարկավոր է գործածել բազմազան մեթոդներ: Ժամանակակից մանկավարժության մոտեցումների համաձայն՝ մեթոդի ընտրության վրա ազդող գործոնները բազմաթիվ են: Դա կախված է, մասնավորապես, սովորողների տարիքից, կրթական նպատակներից, նյութի բովանդակությունից, առկա ռեսուրսներից և այլն: Այդ տեսանկյունից լավագույն մեթոդներից մեկը, որն առավել լիարժեք է համապատասխանում մաթեմատիկայի դասապրոցեսում ֆինանսական կրթություն իրականացնելու նպատակին, խնդրակենտրոն ուսուցումն է[2]:

Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը պատկերացնելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է. ո՞ւր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով:

Նպատակային և արդյունավետ համարվում է այն դասը, որը նախապես պլանավորված է, և պլանում տեսանելի է, թե սովորողը դասի ո՛ր փուլում ի՛նչ կարող է անել, և ինչպես կարող են նրան աջակցել դասընկերներն ու ուսուցիչը: Չպետք է մոռանալ, որ համադասարանցիները շատ կարևոր դերակատարում ունեն դասընկերներին աջակցելու հարցում:

Դասը կազմվում է հետևյալ հաջորդականությամբ.

- Հստակեցվում է ուսուցանվող նյութի կառուցվածքը, բովանդակությունը:
- Իրականացվում են գործողություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր սովորողի և դասարանի պահանջները:

Հաճախ սովորողի կրթության ճիշտ կազմակերպման նպատակով իրականացվում է թիմային աշխատանք, ներառվում են տարբեր օղակներ, օգտագործվում են բոլոր ջանքերը, բայց գրեթե մոռացվում է այդ օղակի ամենակարևոր անձի՝ սովորողի կարծիքն իր կրթության կազմակերպման վերաբերյալ: Չպետք է անտեսել

[2] Ջեռնարկ, 5-6-րդ դասարանների գերմաներենի ուսուցիչների համար, Ն.Անթառանյան, «Անտարես», 2014թ.,էջ 104:

ինքնագնահատման դերը սովորողի գնահատման գործընթացում: Այն չափազանց կարևոր է սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու համար:

- Ուսուցիչը դասը պլանավորում է յուրաքանչյուր սովորողի համար:
- Յուրաքանչյուր սովորող պետք է դասին ունենա լիարժեք մասնակցություն:
- Ուսուցիչը կրթության հիմնական պատասխանատուն է:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դասի պլանավորումը պետք է ներառվի դասարանի ընդհանուր դասի պլանում[3]:

Ուսուցման հիմնական մեթոդական սկզբունքներից են գերմաներենով հաղորդակցվելու ունակությունն ու կարողությունը: Այս սկզբունքը ընդգծում է դասավանդման հաղորդակցական ուղղվածությունը:

Գերմաներենով հաղորդակցվելու խոսքային գործունեության համար անհրաժեշտ բոլոր ձևերը պետք է իրականանան միասնական ծրագրով, սակայն միաժամանակ դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբեր մոտեցումներ:

Ուսուցումը պետք է ընթանա փուլերով, ինչը պայմանավորված է լեզվական ու խոսքային գործունեության ձևավորման մակարդակներով:

Ուսուցիչ–աշակերտ հարաբերությունները, ինչպես նաև սովորողների փոխադարձ հարաբերությունները, նրանց հետաքրքրությունը ուսումնական նյութի և միմյանց նկատմամբ պետք է ապահովվեն բազմաբնույթ ուշագրավ ու ուսանելի տեքստերի ու միջոցառումների օգնությամբ:

Սովորելու շարժառիթներ ստեղծելու և դրանք խթանելու կարողություններն ու արդյունավետության ապահովումը պայմանավորվում է իմացական հետաքրքրությունների ձևավորումով:

Գերմաներենի ուսուցումը մայրենի լեզվի՝ հայերենի հիման վրա կառուցելու սկզբունքը աշխատանքի այս փուլում մայրենի լեզվի կիրառման և լեզվական երևույթների ավելի խոր ընկալման համար լայն հնարավորություններ է ստեղծում:

Գերմաներենի ուսուցումը պետք է ծառայի աշակերտին դաստիարակելու, կրթելու և նրա մտավոր կարողությունները զարգացնելու նպատակին:

Աշակերտը պետք է կարողանա արտահայտվել ձեռք բերած տեղեկությունների մասին և քննարկել դրանք դասընկերների հետ:

[3]Hentschel E., Weydt H. Handbuch der deutschen Grammatik. Walter de Gruyter. Berlin-New York. 2003,էջ 67:

Օտար լեզվի (գերմաներենի)՝ որպես դպրոցական առարկայի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը պետք է ուղղված լինի աշակերտների դաստիարակությանը, կրթությանն ու բազմակողմանի զարգացմանը և նրանց մերձեցմանը գերմանախոս ժողովուրդների մշակույթին: Այս ուղղվածությունը որոշվում է դասավանդվող առարկայի որոշակի հաղորդակցական նպատակներով:

Այլ կերպ ասած՝ հաղորդակցական ուղղվածությունը պետք է ապահովի գերմաներենի գործնական տիրապետումը հատուկ նախատեսված մակարդակում: Դասագրքում տրված նյութը պետք է ապահովի այնպիսի բարոյաէթիկական խնդիրների քննարկումը, ինչպիսիք են փոխադարձ հարաբերությունները ընտանիքում և դպրոցում, ընկերասիրությունը, հայրենասիրությունը և աշխատասիրությունը, ինչպես նաև փոխադարձ օգնությունը, սովորելու և հանգստի կազմակերպումը, այնպիսի տեքստերի ընթերցումը, որոնցում արծարծվում ու քննարկվում են նման խնդիրներ մեր երեխաների և նրանց արտասահմանյան հասակակիցների վերաբերյալ:

Սովորողների ակտիվ ներգրավումը օտար լեզվի յուրացման գործընթացում օժանդակում է ընդհանուր և հատուկ ուսումնական կարողությունների, ինչպես նաև աշխատասիրության զարգացմանը:

Այս ամենը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե ստեղծվի անհրաժեշտ հետաքրքրություն, բարյացակամ մթնոլորտ անհատի ստեղծագործական ունակությունների զարգացման, նրա երևակայության ու գեղագիտական հակումների համար:

Այս ամենի իրականացումը ապահովում է հետևյալ կարողությունները.

- Հասկանալ խոսակցին՝ կիրառելով նաև որոշակի հարցեր լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար:
- Բացատրվել խոսակցի հետ հաղորդակցական իրադրությունների որոշակի սահմաններում:
- Կարդալ և հասկանալ դասագրքի, ինչպես նաև ընթերցանության համար հանձնարարվող լրացուցիչ նյութը՝ անհրաժեշտության դեպքում դիմելով նաև բառարանին:

- Նամակ գրել՝ հենվելով դասագրքում տրված նմուշների վրա, ինչպես նաև նամակն օգտագործել որպես միջոց անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար:
- Հասկանալ, կռահել անծանոթ բառերի նշանակությունը՝ ծանոթ բառակազմական բաղադրիչների, նախադասության ընդհանուր իմաստի, մայրենի լեզվի հետ նույն հնչողության հիման վրա:
- Ճանաչել և գրավոր ու բանավոր խոսքում օգտագործել բարդ համադասական և տարբեր բնույթի բարդ ստորադասական նախադասությունները՝ ուշադրություն դարձնելով դրանց շարադասությանը:
- Կարողանալ որոշակի տեղեկություններ գրել իր, իր ընտանիքի, դպրոցի, ուսուցիչների և ընկերների մասին, կարողանալ այդ ամենը օգտագործել բանավոր խոսքում:

Ուսուցչի համար նախատեսված ձեռնարկում տրվում են ընդհանուր խորհուրդներ գլուխների թեմատիկ պլանների ու դրանց իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքի վերաբերյալ: Կարևոր է, որ ուսուցիչն աշխատանքն սկսելիս պատկերացում ունենա, թե ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը, դրանում նրան անհրաժեշտ կօգնի տվյալ գլխի հետ տարվելիք աշխատանքի հետ ծանոթանալը:

Դասագրքի վրա աշխատելու համար նախատեսվում է 68 ժամ: Դասագիրքը բաղկացած է ինը գլխից, յուրաքանչյուր գլուխը՝ հիմնականում երկու ենթագլխից: Դասագրքի վերջում տրվում են դասագրքում տեղ գտած թեմաների հետ առնչվող ուսուցողական տեքստեր և գեղարվեստական գրականության ադապտացված հատվածներ:

1. Beziehungen zwischen Menschen 1.Personen beschreiben
2. Mitleid und Hilfe 2.Meine Vorlieben 1.Lust auf Lesen und Bücher 2.Musik Theaterbesuch 3.Brieffreundschaft

3.Schulferi
en 1.Ferien
2.Der Tag, an dem die Arbeit
ruht 4.Die Natur
1.Die Natur im
Frühling 2.Die Natur
im Sommer 3.Die
Natur im Herbst
4.Die Natur im
Winter 5.Armenien
1.Kurze geographische
Informationen 2.Feste in
Armenien
6.Die Bundesrepublik
Deutschland 1.Die Schulen in
Deutschland
2.Meine Altersgenossen in
Deutschland 7.Lebensmittel
1.Lebensmittel auf dem Markt und im
Supermarkt 2.Was ich gern esse und trinke
8.Sport
1.Sportlicher
Körperbau 2.Sport
und Gesundheit
9.Traumreisen
1.Reisen
2.Traumreis
en

Վերջում տրվում են ընթերցանության համար նախատեսված տեքստեր և գերմաներեն-հայերեն մանրամասն բառարան:

Գերմաներեն լեզվի դասավանդման գործընթացում շատ կարևոր է նաև համագործակցային ուսուցումը, որը դասավանդման մեջ բազմազանություն է մտցնում և գործուն ու արդյունավետ ուսումնառության

հնարավորություն է ընձեռում:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը:

Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են.

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցությունն ստեղծում է ինքնահանձնման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ

և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

ԳԼՈՒԽ 2. ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Աշակերտներին մոտիվացնելու համար գերմաներենի ուսուցումը կարելի է կազմակերպել ինտերակտիվ մեթոդով:

Ինտերակտիվ մեթոդը նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ.՝ նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դասավանդողը մշակում է նաև դաս պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ուսանողը սովորում է նյութը):

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը[4]:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցչի ֆունկցիաներն են.

- Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
- Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:

[4]Кудрявцев В.Т., Проблемное обучение: истоки, сущность, перспективы.– М.: Знание, 1991,էջ 54:

- Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
- Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:
- Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Ինտերակտիվ դասավանդման մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ իմիտացիոն և ոչ իմիտացիոն: Իմիտացիոն տեխնոլոգիաների հիմքում ընկած է իրական իրավիճակների գործնեության խնդիրների վերարտադրումը ուսումնական պրոցեսի ընթացքում:

Ոչ իմիտացիոն մեթոդները բնութագրվում են ուսումնասիրվող գործընթացի մոդելի բացակայությամբ, հարց–պատասխան հաղորդակցությամբ:

Ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կլցնի հատորներ:

Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար:

Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ:

Հանրակրթական դպրոցներում, ինչպես մյուս ուսումնական առարկաները, գերմաներենի ուսուցումը ևս իրականացվում է ԽԻԿ համակարգի միջոցով:

Այս համակարգը ոչ միայն սովորողի մտածողությունն է խթանում, այլև որոշակի հետաքրքրություն է մշակում կարդալու գործընթացի հանդեպ: Համակարգն իրականացվում է երեք փուլով.

- Խթանում:
- Իմաստի ընկալում:
- Կշռադատում:

Առաջին՝ խթանում փուլում անհատական որևէ առաջադրանք է տրվում կամ խմբային քննարկում է անցկացվում, որի ընթացքում նպատակ է դրվում վերհանելու

սովորողների գիտելիքները, կարծիքները կամ անձնական փորձը այդ թեմայի շուրջ: Երբ այսպիսի առաջադրանք տրվում է՝ գրական երկի ուսումնասիրությունն սկսելուց առաջ, սովորողը հոգեբանորեն նախապատրաստվում է կարդալիք նյութի ընկալմանը:

Խթանման փուլի հիմնական նպատակներից են.

- Նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, ինքնարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:
- Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝
- Մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-ինքնարկիր, ձնագնդի, հինգ բոպեանոց ազատ շարադրանք:

Խթանման փուլում կիրառվող մեթոդներից են՝ 1) մտագրոհը, 2) խմբավորումը, 3) պրիզման և այլն:

Խթանման փուլում մանկավարժների կողմից կիրառվող մեթոդներից է <<Մտագրոհ>> մեթոդը:

<<Մտագրոհ>> մեթոդը խմբային (թիմային) աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Մեթոդի այս տեսակն անվանում են «մտքերի տարափ», քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը:

Քայլ 1.Պատմելով դասարանին գերմաներեն լեզվի բերականության մասին՝ սովորողներին ընդհանուր գծերով ներկայացվում է աշխատանքի ընթացքը:

Թեման, խնդիրը կարելի է ձևակերպել բանավոր, հրահանգի ձևով կամ որպես վերնագիր գրելով գրատախտակին: Անհրաժեշտ է ընդգծել, որ մտագրոհից հետո բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան արտահայտելու իրենց տեսակետները ցանկացած մտքի վերաբերյալ:

Քայլ 2.Հաջորդիվ աշակերտները կկարողանան իրականացնել թեմայի վերաբերյալ ինքնարկումներ, որի միջոցով նրանք միմյանց հետ կփոխանակվեն սեփական տեսակետներով, ինչն էլ կխթանի նրանց մտածողությունը:

Քննարկումների ժամանակը գալու է ավելի ուշ, այժմ միայն մտքեր են արտահայտվում: Կարևոր է նաև ժամանակային սահմանափակումների հարցը: Լավ կլինի խմբին նախօրոք ասել, որ մտագրոհի համար նախատեսված է, ենթադրենք 8-10 րոպե: Կարևոր է վերջին փուլի քննարկմանը, դասակարգմանը կամ լրացումներին ժամանակ տրամադրելը:

Երբ մտքեր արտահայտելու համար տրամադրված ժամանակն ավարտվի, կարելի է հնարավորություն տալ այլընտրանքային տարբերակներ մտածելուն կամ լրացուցիչ ցուցակ կազմելուն: Պակաս կարևոր չէ ընթացքում արտահայտված մտքերի գրանցումը, այնուհետև դրանց հավաքագրումն՝ ի տես բոլորի:

Քայլ 3.Քննարկումից հետո աշակերտները կատարում են խմբային աշխատանք: Խմբային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր խումբ ինքն է ընտրում գրառման ձևը, ասենք.

1. պարզապես թվարկմամբ գրանցել,

2.թղթի տարբեր անկյուններում առանց վերլուծության խմբավորել գրանցումները,

3.կենտրոնում գրել խնդիրը, թեման, ապա, դրա շուրջը շրջանաձև գրառելով «հավաքել» արտահայտված մտքերը և այլն:

Երբ մեթոդը կիրառվում է մեծ խմբի՝ ամբողջ դասարանի մասնակցությամբ, գրանցումները գրատախտակին կամ թղթի վրա կարող է կատարել ուսուցիչը կամ աշակերտներից մեկը (մի քանիսը):

Եթե դասարանը բաժանված է համագործակցային խմբերի, անհրաժեշտ է խմբերից յուրաքանչյուրին հիշեցնել, որ թիմակիցներից մեկին հանձնարարվում է գրանցել բոլոր մտքերը, իսկ աշխատանքն ավարտելուց հետո մեկ այլ մասնակցից պարտավորվում է գրառումները ներկայացնել ամբողջ դասարանին: Խմբերի գրառումները պարզապես ընթերցվում են բոլորի համար, և գրանցումներով թղթերը փակցվում են լսարանում մինչև դրանց վերլուծությանն անցնելը:

<<Մտագրոհ>> մեթոդի առավելություններն են.

- Խթանում է ստեղծագործական մտածողությունը:
- Հստակ մշակված կանոնների գոյությունը մտագրոհը դարձնում է արդյունավետ և որպես մեթոդ հեշտ է յուրացվում սովորողների կողմից:

- Միտքը միտք է ծնում:
- Խմբովի կազմվում է գաղափարներ, առաջարկների ավելի լայն ցանկ, քան այն կաներ մեկ մարդը:
- Խմբային աշխատանքների այս տարբերակում փոքր է հավանականությունը, որ որևէ արդյունավետ միտք կանտեսվի:
- Պարզ մեթոդ է, հեշտ է հասկանալ և հեշտ է կիրառել: Այն չի պահանջում բարդ սարքավորումներ և երկարատև ուսուցում, իսկ նրա արդյունքները կարելի է հեշտությամբ գնահատել:

Իմաստի ընկալման փուլում հաղորդվում է նոր նյութ: Կազմակերպվում է նոր նյութի ընթերցումը: Աշակերտները ընթերցում են հատված առ հատված, իրար հաջորդելով:

Պետք է աշխատել, որ յուրաքանչյուր երեխա կարողանա գոնե մեկ հատված կարդալ: Ավելի ուշ՝ ուստարվա ընթացքում, կարելի է հանձնարարել, որ կարդան ինքնուրույն, առանձին–առանձին, մտքում, եթե արդեն վարժ են կարդում, կամ էլ՝ առաջարկել, որ տանը կարդան, իսկ դասարանում կատարեն տեքստային տարաբնույթ աշխատանքներ:

Ընթերցելու ընթացքում՝ իր նշած համապատասխան տեղերում, ուսուցիչը խնդրում է կանգ առնել և հարցեր է տալիս դասարանին. «Ի՞նչ է լինելու հետո, ի՞նչ է անելու հերոսը, ի՞նչ կլինի, եթե...» և այլն:

Այսինքն՝ ուսուցիչը բացահայտ ներգործություն չունի, բայց անուղղակի կերպով սովորողներին տանում է դեպի խթանման փուլում առաջադրված վարկածների և տեքստում նկարագրվող դեպքերի, գործողությունների համադրման ճանապարհով: Սա սովորողների հետաքրքրությունը վառ պահելու, դասաժամին նրա գործուն մասնակցությունն ապահովելու միջոց է:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝

- Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:
- Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝

● Т-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում:

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչները ընտրված մեթոդների միջոցով հաղորդում են նոր նյութը:

1. Նոր նյութի ակտիվ և ըմբռնումով յուրացնելուն միտված նախապատրաստություն:

● Փուլի դիդակտիկ խնդիրը: Կազմակերպել և նպատակին հասցնել աշակերտների ճանաչողական գործունեությունը:

● Փուլի բովանդակությունը: Ուսուցանվող նոր նյութի թեմայի, խնդիրների և նպատակի հաղորդում, դրա գործնական կիրառության ցուցադրություն, կրթական խնդրի առաջադրում:

● Դրական արդյունքների հասնելու պայմաններ: Նպատակի նախնական ձևակերպում, սովորողների համար նոր նյութի կարևորության գնահատում, դասի կրթական նպատակի հստակ ձևակերպում. Ի՞նչ պետք էսովորեն դասի ընթացքում, ինչպիսի՞ գիտելիքների, կարողությունների և հմտությունների պետք է տիրապետեն: Տարբեր դասերի ընթացքում դասի նպատակների հաղորդման մեթոդների փոփոխականություն:

● Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ: Հաջորդ փուլերում սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացում, նոր նյութի ընկալման և կշռադատման արդյունավետության բարձրացում, ուսուցանվող նյութի գործնական նշանակության ընկալումը:

Իմաստի ընկալման փուլում կիրառվող մեթոդներից է <<Խճանկարի>> մեթոդը:

«Խճանկար» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի

գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը:

Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները:

Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում:

Փուլը	Նկարագրությունը
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում:	Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում:	Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը:
Աշխատանք ուսումնական խմբում:	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
Ավարտական աշխատանք:	Աշակերտները անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:
Ամփոփում:	Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Քայլ 1. Թեման բաժանել առանձին ամբողջական մասերի, հատվածների: Կարևոր է հաշվի առնել աշխատանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրել տարբեր բարդության ու հագեցվածության հատվածներ:

Քայլ 2. Ստեղծել չորս-հինգ հոգուց բաղկացած համագործակցային խմբեր (նպատակային խմբեր ձևավորելիս հնարավորության դեպքում հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները):

Քայլ 3. Համագործակցային խմբերում մասնակիցներին համարներ են տրվում (1,2,3,4...):

Քայլ 4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերում (1.1,1...; 2.2,2... և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք:

Խմբային աշխատանքների ընթացքը կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում սովորողներն իրենք կարող են մշակել իրենց խմբի աշխատանքային պլանը: Իսկ սա իր հերթին պայմանավորված է նրանով, թե «Խճանկար» մեթոդը դասի ընթացքում կամ ուսուցման մեջ ինչ տևողությամբ է կիրառվում:

Քայլ 5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբեր և հաշվետվություն են տալիս խմբին իրենց փորձագիտական խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում՝

- ներկայացվում են խմբային քննարկումների, աշխատանքների արդյունքները,
- աշակերտները իրենց սովորածը սովորեցնում են միմյանց,
- միավորվում, ամբողջանում են գիտելիքները:

Կշռադատումը սովորելու գործընթացի այն փուլն է, երբ աշակերտները մտովի հետադարձ հայացք են գցում ու խորհում դասի ընթացքում հանդիպած գաղափարների և ընկալած նյութի շուրջ, տալիս են հարցեր, անում մեկնաբանություններ, բանավիճում, նոր սովորածը օգտագործում են որևէ կերպ:

Կշռադատման փուլի կազմակերպման համար կան բազմաթիվ ու բազմազան տարբերակներ: Ընտրությունը կախված է դասավանդվող առարկայից, աշակերտների մակարդակից, ժամանակից, նպատակահարմարությունից:

Ընդհանուր հարցման քննարկում: Աշակերտներին խնդրել մտածել և քննարկել նախօրոք պատրաստած մեկնաբանող հարցեր (մեկնաբանող հարցը հստակ, կոնկրետ հարց է, որը վերաբերում է տեքստում եղած որևէ խնդրի, և որին կարելի է տալ մի քանի պատասխան):

Կշռադատման փուլում սովորողը հանրագումարի է բերում իր գիտելիքները, վերակառուցում է իր իմացածը կարդացածի ազդեցությամբ: Իսկ գրական երկը հնարավորություն է ընձեռում կարդացածի հիման վրա զարգացնելու նոր, արդեն սեփական վարկածները: Սովորողը ոչ միայն կարդացածն իր բառերով է

վերարտադրում, նոր վերնագիր է առաջարկում կամ դեպքերի զարգացման իր տարբերակն է մշակում, այլև հանդես է գալիս մեկնաբանություններով և դատողություններով:

Կշռադատման փուլի կարևոր բաղադրիչներից է ամփոփումը կամ անդրադարձը, երբ սովորողը վերհիշում է դասի ընթացքում իր կատարած աշխատանքը և փորձում հասկանալ, թե ի՞նչ արեց և ինչու՞: Սա շատ կարևոր է. յուրաքանչյուր սովորող պիտի հստակ իմանա, թե ի՞նչ նպատակով է ուսուցիչն իրեն առաջարկում այդպիսի գործունեություն ծավալել: Բացի դրանից՝ աշակերտը հոգեբանորեն զգում է ուսումնական գործընթացում իր դերի կարևորությունը և անհրաժեշտությունը: Այդ պատճառով էլ ուսուցիչը դասի պլան կազմելիս հատուկ պիտի նշի թե՝ ուսուցանողի, թե՝ սովորողի նպատակները և գործողությունները դասի ընթացքում:

ԽԻԿ համակարգը հանդուրժողականություն, դիմացինին լսելու, ասածը հասկանալու կարողություններ է ձևավորում, նպաստում մտքերն ազատ և անկաշկանդ արտահայտելուն, ինչպես նաև զարգացնում է սովորողների ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը:

Այսպիսով, ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի: Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար: Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Կշռադատման փուլի նպատակներից են՝ սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում:

Կշռադատման փուլում կիրառում ենք «Երեք բանալի, մեկ կողպեք» մեթոդը: Աշակերտներին առաջարկում ենք բնագրից դուրս գրել երեք նախադասություն, որոնք պետք է ընտրվեն կողպեքի՝ առածի բովանդակությունից դուրս գալով:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Դասի արդյունավետությունը բարձր կլինի, եթե ուսուցումը կազմակերպի համագործակցային փոքր խմբերով:

Փոքր խմբերով համագործակցային ուսուցման առավելություններից մեկն էլ այն է, որ դրական փոխկախվածությամբ խմբի անդամները, երբ համատեղ դժվարություն են հաղթահարում, ապա նա, ով որևէ նյութ է բացատրում ընկերոջը, դրանով իսկ զարգացնում է իր կարողությունները (մասնավորապես՝ հաղորդակցական կարողությունները), և բացի այդ՝ սովորեցնելով ինքն ավելի լավ է սովորում:

Մեթոդների կիրառմամբ ներկայացնենք դասի արդյունավետությանը նպաստող քայլերի հաջորդականությունը:

Քայլ 1. Թեմաների համար ներկայացված հարցերից ու խնդիրներից շատերը կարող են օգտագործվել խմբային աշխատանքի համար: Ավելին, թեմայի, այսպես կոչված, տեսական նյութի զգալի մասը նույնպես կարող է ծառայել այդ նպատակին: Իհարկե, դա կախված է ուսուցչի հմտությունից:

Եթե նա հակում ունի նյութը մատուցել ոչ թե որպես պատրաստի գիտելիքներ, այլ հասնել նրան, որ աշակերտներն իրենք հայտնաբերեն, ապա յուրաքանչյուր տեսական հարցադրում կարող է դարձնել որպես խմբային աշխատանքի առաջադրանք:

Քայլ 2. Փոքր խմբերով աշխատելու համար հարցեր կազմելիս պետք է հետևել, որ հարցը որոշ տարողություն ունենա այն առումով, որ՝

- հնարավորություն ընձեռի խմբում քննարկում կատարելու,
- համատեղ աշխատանքը ավելի լավ արդյունքի հասցնի, քան անհատական աշխատանքը,
- հնարավորություն ընձեռի որոշակի մասնակցություն ապահովելու խմբի բոլոր անդամներին, այդ թվում նրանց, ովքեր, հավանաբար, պասիվ կմնային խմբային աշխատանքի բացակայության դեպքում:

Քայլ 3. Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող

բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն:

Ներկայացնենք 6-րդ դասարանի գերմաներեն լեզվի թեմատիկ դասի պլան «Auf dem Markt», «Im Supermarkt» թեմայից:

Առարկան՝ Գերմաներեն

Դասարանը՝ 6-րդ

Աշակերտների քանակ՝ 12

Դասի տևողությունը՝ 45 րոպե Դասի

տիպը՝ Համագործակցային

Դասի թեման՝ «Auf dem Markt», «Im Supermarkt»

Ուսումնական նյութեր՝

- Ցուցապաստառներ (մրգեր, բանջարեղեն, սննդամթերք):
- Մրգեր, բանաջարեղեն, սննդամթերք:
- Սավարաթղթեր, թերթիկներ՝ համագործակցային աշխատանքի ժամանակ բառառգնիներ կազմելու համար:
- Երկխոսություններ (շուկայում և խանութում) անցկացնելու համար համապատասխան նյութեր և կահավորանք:
- Գրատախտակ:
- Դասագրքեր, խաղեր:
- Երգ «Wie heisst es auf Deutsch?»:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

Ակադեմիական:

- Ստուգել և խորացնել աշակերտների ունեցած գիտելիքները վերը նշված թեմայի շրջանակներում:
- Հարստացնել աշակերտների բառապաշարը:
- Զարգացնել առօրյա կենցաղային իրադրություններում հազորդակցվելու կարողություններ և հմտություններ:
- Խթանել բոլոր աշակերտների մասնակցությունը երկխոսություններին, դերային խաղերին:

- Երկխոսություններում թեմային վերաբերվող բառապաշարի գործածություն:

Դաստիարակչական:

- Աշակերտների մեջ ձևավորել առաջադրանքները համագործակցելով կատարելու կարողություններ:
- Կարողանալ ճիշտ գնահատել իր, ընկերոջ, մյուս խմբերի աշխատանքը:
- Խմբային աշխատանքը միասին կատարելու և միասին սովորելու առավելության գնահատում:
- Մրցակցության միջոցով ավելին սովորելու և իմանալու, առաջ ձգտելու նպատակադրում և հաղթահարում:
- Աշակերտների դրական փոխկապակցվածության, պատասխանատվության բարձրացում:

Ուսուցչի գործունեությունը դասապրոցեսում:

- Դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում:
- Սովորողների խմբերի ձևավորում:
- Առաջադրանքի ներկայացում և բացատրում:
- Խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում՝ միջամտություն:
- Գնահատում:

Ակնկալվող արդյունքը:

Աշակերտները պետք է դասի ավարտին կարողանան թեմային վերաբերվող բառապաշարը օգտագործել համապատասխան հաղորդակցական իրադրություններում և պատասխանել հարցին՝ «ինչ՞ու սովորեցինք այս ամենը»:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ:

Ընդհանուր հարցման միջոցով պարզել, թե ինչ բառապաշար ունեն աշակերտները ճշված թեմայից (մտագրոհ): Ընթացքում ավելացնել նոր բառեր և արտահայտություններ՝

der Schinken- խոզապուխտ

lecker,

schmackhaft-համեղ süß,

sauer-քաղցր-թթու

billig, teuer-էժան, թանկ

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ:

ա) Ցուցադրել մրգեր, բանաջարեղեն և սննդամթերք պատկերող ցուցապաստառ, անվանել դրանք, ասել թե ինչ են երեխաները ամենից շատ սիրում կամ չեն սիրում:

Was magst du am liebsten?

Ich mag .....

Ich mag nicht.....

բ) «Հնգյակի մեթոդի» կիրառմամբ անցկացնել խաղ (Ցույց տալ օր. խնձորը)

Apfel

Der

Apfel

Der reife Apfel

Der reife Apfel ist lecker, gross und rot.

Der reife grosse leckere rote Apfel liegt auf dem Tisch.

գ) Գունավոր թերթիկների միջոցով դասարանը բաժանվում է երեք խմբի:

Ցուրաքանչյուր խումբ ստանում է ստվարաթղթեր, գունամատիտներ, ծրարներ թերթիկներով մրգերի, բանջարեղենի, սննդամթերքների անուններով: Ամեն խումբ իր ծրարի միջից գտնում է իրեն հանձնարարված թեմային «Obst», «Gemüse» «Lebensmittel» վերաբերվող բառաթերթիկները՝ առանձնացնելով ավելորդ բառերը և դասավորում բառառգնին:

die Orange die Birne der Pfirsich die Gurke die Kartoffeln

der Kohl





der Kiwi Rübe die Banane die Möhre die

der Apfel

die Tomate

Մինչ աշակերտները աշխատում են խմբով, գրատախտակին գրվում է առաջադրանքը՝

- Ո՞ր բառը չի համապատասխանում տվյալ շարքին:

1. Die Banane, die Kirsche, die Kartoffel, die Birne

2. der Schinken, die Wurst, die Butter, der Fisch 3. das Ei, der Käse, die Butter, die Milch

4. das Eis, die Gurke, die Torte, die Schokolade

Ցուրաքանչյուր խումբ աշխատում է գտնել ավելորդ բառը և բացատրել, թե ինչու է այն ավելորդ. Օրինակ առաջին շարքում ավելորդ է կարտոֆիլ բառը, որովհետև այն բանաջարեղեն է, իսկ մյուսները՝ մրգեր են:

Խմբային աշխատանքը ամփոփվում է և գնահատվում:

Կազմվում են նոր խմբեր՝ 1 – 4 թվերի օգնությամբ և նրանց հանձնարարվում է կազմել երկխոսություններ և այն ցուցադրել դասարանին (դասարանում կան համապատասխան կահավորված անկյուններ՝ շուկայում, մթերային խանութում):

Երկխոսությունները կազմելիս աշակերտները պետք է կարողանան իրենց վերաբերմունքը արտահայտել մթերքի գնի(Es ist aber teuer. Dieser Käse ist billig.) վերաբերյալ, զրույցը վարել բաղաքավարի:

- Guten Tag!
- Sie wünschen bitte?
- Geben Sie mir bitte!
- Danke schön!
- Auf Wiedersehen1

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ:

Ամփոփվում է դասը. ինչ սովորեցին աշակերտները դասի ընթացքում: Ամփոփվում է աշակերտների կատարած աշխատանքները և գնահատվում: Գնահատականները հիմնավորվում են:

Տնային առաջադրանք: Տանը գրել երկխոսություններ <<....Auf dem Markt....>>, <<.....Im Lebensmittelgeschäft...>>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ:
- Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:
- Անմիջական կապը շրջապատող իրականության, երեխայի կյանքի ու կենսափորձի, հետաքրքրությունների ու երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը և բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի անձի ինքնահաստատման և ինքնաարտահայտման համար:
- Ուսուցման հիմնական մեթոդական սկզբունքներից են գերմաներենով հաղորդակցվելու ունակությունն ու կարողությունը: Այս սկզբունքը ընդգծում է դասավանդման հաղորդակցական ուղղվածությունը:
- Գերմաներենով հաղորդակցվելու խոսքային գործունեության համար անհրաժեշտ բոլոր ձևերը պետք է իրականանան միասնական ծրագրով, սակայն միաժամանակ դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբեր մոտեցումներ:
- Ուսուցումը պետք է ընթանա փուլերով, ինչը պայմանավորված է լեզվական ու խոսքային գործունեության ձևավորման մակարդակներով:

- Օտար լեզվի (գերմաներենի)՝ որպես դպրոցական առարկայի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը պետք է ուղղված լինի աշակերտների դաստիարակությանը, կրթությանն ու բազմակողմանի զարգացմանը և նրանց մերձեցմանը գերմանախոս ժողովուրդների մշակույթին: Այս ուղղվածությունը որոշվում է դասավանդվող առարկայի որոշակի հաղորդակցական նպատակներով:
- Այլ կերպ ասած՝ հաղորդակցական ուղղվածությունը պետք է ապահովի գերմաներենի գործնական տիրապետումը հատուկ նախատեսված մակարդակում: Դասագրքում տրված նյութը պետք է ապահովի այնպիսի բարոյաէթիկական խնդիրների քննարկումը, ինչպիսիք են փոխադարձ հարաբերությունները ընտանիքում և դպրոցում, ընկերասիրությունը, հայրենասիրությունը և աշխատասիրությունը, ինչպես նաև փոխադարձ օգնությունը, սովորելու և հանգստի կազմակերպումը, այնպիսի տեքստերի ընթերցումը, որոնցում արծարծվում ու քննարկվում են նման խնդիրներ մեր երեխաների և նրանց արտասահմանյան հասակակիցների վերաբերյալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գաբրիելյան Յու., Գերմաներեն լեզվի տիպաբանություն: Երևան: Երևանի Համալսարանի հրատարակչություն,2006թ.:
2. Ջեռնարկ, 5-6-րդ դասարանների գերմաներենի ուսուցիչների համար, Ն.Անթառանյան, «Անտարես», 2014թ.:
3. Кудрявцев В.Т., Проблемное обучение: истоки, сущность, перспективы.– М.: Знание, 1991.
4. Hentschel E., Weydt H. Handbuch der deutschen Grammatik. Walter de Gruyter. Berlin-New York. 2003.